ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 1 *Общественные науки*

Ակ. Մնացականյան

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅ ՊԱՇՏՊԱՆՆԵՐԸ

I

Մոսկվայի համար մղված ճակատամարտը հանդիսանում է ՍՍՌՄ ժողովուրդների Հայրենական Մեծ Պատերազմի պատմության ամենափառավոր էջերից մեկը։

Հիտլերյան Գերմանիայի կողմից Սովետական Միության վրա կատարված ուխտադրուժ հարձակման առաջին օրից սկսած Մոսկվան հանդիսանում էր սովետական ժողովրդի ազատագրական, Հայրենական Մեծ Պատերազմի շտաբը, ռազմա-ստրատեգիական և քաղաքական մի կարևորագույն բազա, որը խոշոր դեր խաղաց սովետական ժողովրդի ուժերը համախմբելու, մոբիլացնելու, թշնամուն վճռական հակահարված տալու գործում։

Ահա թե ինչու հիտլերյան կլիկը պատերազմ մղելով Սովետական երկրի դեմ, որպես ստրատեգիական գլխավոր ուղղություն ընտրեց Մոսկվան, իր զորքերի գլխավոր ուժերը նետեց Մոսկվայի ճակատը, օժանդակ ուժերով հարձակվելով նաև հարավում՝ Ռոստովի ճակատում և հյուսիսում՝ Լենինգրադ-Տիխվինի ճակատում։

Հիտլերյան կառավարությունը գերմանա-ֆաշիստական զորքերի առաջ դրել էր հիմնական խնդիր՝ շրջապատել ու ջախջախել Մոսկվան պաշտպանող սովետական զորքերը և գրավել Սովետական Միության մայրաքաղաքը։ Գերմանական ֆաշիստները Մոսկվայի գավթումը հռմալում էին «վճռական հաղթություն»։

Գերմանական գլխավոր հրամանատարությունը տենդորեն ձգտում էր դեպի այդ խնդրի կատարումը։ Այդ նպատակով գերմանական հրամանատարությունը դեռևս 1941 թ. սեպտեմբերի վերջում Մոսկվայի ուղղությունը նետեց իր գլխավոր ուժերը —35 դիվիզիա, տանկային ու մոտոռացված զորամասեր, որոնք հաղթական մարշով անցել էին ամբողջ Արևմտյան Եվրոպան։ Մոսկվայի վրա ուղարկվեցին հազարավոր ինքնաթիռներ։ 1941 թվ. հոկտեմբերի 2-ին Հիտլերը հրաման տվեց ֆաշիստական բանակներին Մոսկվայի վրա վճռական հարձակման անցնելու մասին։ Այդ հրամանում ասված է.

> *«Մի քանի շաբաթվա ընթացքում երեք տարենահիմնական արդյունաբերական շրջանները լիովին մեր ձեռքում կլինեն։ Վերջապես նախադրյալ է ստեղծվել վերջին, հսկայական հարվածի համար, որը դեռ մինչև ձմեռվա սկիզբը պետք է հանգեցնի թշնամու ոչնչացմանը...»։*

Ֆաշիստական հրեշը իր զինված հորդաներին հրաման էր տվել գավթել

Դոնբասի արդյունաբերական շրջանները և ներխուժել Կովկաս, գավթել Լենինգրադի արդյունաբերական շրջանները և տժենագլխավորը դրավել Մոսկվան։

Սկսվեց պատերազմների պատմության մեջ նախորդը չունեցող ճակատամարտը, որը մղվում էր ոչ միայն Մոսկվայի, այլև տիրողջ Սովետական Միության ազատության համար, ամբողջ աշխարհի ազատասեր ժողովուրդների համար։

Մոսկվան դարձավ այդ պայքարի դրոշը, դարձավ մի անդրդվելի ժայռ, որին զարնվելով ջարդվեցին հիտլերյան զրտհապատ հորդաները։

Գերմանացիների հարձակման օրը հիտլերյան «Ֆյոլկիշեր բեոբախտեր» թերթը 1941 թվի հոկտեմբերի 3-ի համարի առաջին էջում աչքի ընկնող տառերով գրել էր.

«Մոսկվան բոցերի մեջ է։ Մոսկվան այրվում է հինգ կողմից»։

Հաջորդ օրը գերմանական ռադիոն եվրոպական և ասիական 20 լեզուներով հաղորդեց.

«Մենք ոմբակոծեցինք Մոսկվան, կործանեցինք. իսկ այն, ինչ նրանում դեռ մնում է անվնաս, օրերս մերը կլինի»։[1]

Հիտլերյան բանակը հսկայական աքցանով ուզում էր շրջապատել Մոսկվան, հյուսիսից՝ Ռժեվ—Կալինին, իսկ հարավից՝ Օրյոլ—Տուլա գծերով։

Թշնամին հանդիպեց սովետական զինված ուժերի համառ, կայուն դիմադրությանը։ Գերմանացիների ամեն մի մետր առաջշարժումը տեղի էր ունենում իրենց բազմաթիվ զինվորների արյան գնով և դիակների վրայով։ Երկու շաբաթվա մարտերից հետո թշնամին մոտեցավ Մոսկվայի հեռավոր մատույցներին՝ 200 կիլոմետրի վրա. գրավեց Կալինին և Մոժայսկ քաղաքները։ Մահվան ահեղ սպառնալիք էր կախվել մեր հայրենիքի վրա։ Հարկավոր էր փրկել Մոսկվան, փրկել Ռուսաստանը, ազատագրել Սովետական Հայրենիքը։

Մոսկվայի համար մղվող պայքարը մաավ իր նոր, լարված փուլը։

Սովետական բանակները մղում էին ստրատեգիական ակտիվ պաշտպանողական մարտեր։ Թշնամին շարունակում էր առաջ շարժվել։ Այդ խոշոր ճակատամարտի սկզբում գերմանա-ֆաշիստական բանակներն ունեին ուժերի զգալի գերակշռություն՝ Մոսկվան պաշտպանող սովետական զինված ուժերի նկատմամբ։ Սովետական հրամանատարությունն իր զորքերի առջև գրել էր երեք գլխավոր խնդիր. առաջինը՝ դանդաղեցնել, այնուհետև կանգնեցնել հակառակորդի գերակշռող ուժերը, հյուծել նրանց և փոխել ուժերի փոխհարաբերությունը հօգուտ մեզ. երկրորդ՝ պարտության մատնել հակառակորդի գլխավոր հարվածի խումբը, նրա ձեռքից խլել ստրատեգիական նախաձեռնությունը վճռական ուղղություններում, երրորդ՝ ծավալել հարձակումը լայն ճակատով, պարտության մատնել հակառակորդի զորքերի խմբավորման մեծ մասին, նրանից խլել կորցրած տերիտորիան, առաջին հերթին այն տերիտորիան, որտեղ թշնամին շատ է մոտեցել մայրաքաղաքին և որի հետևանքով վտանգավոր դրություն է ստեղծվել։ Ստալինյան հանճարով մշակված ստրատեգիական այդ բարդ խնդիրը կատարեց

[1] «Москва», Воениздат, 1942 թ., էջ 3։

Սովետական Բանակի հրամանատարությունը մեծ Ստալինի անմիջական ղեկավարությամբ։

Մոսկվայի պաշտպանությունն այդպիսով կարելի է բաժանել երկու էտապի։ Առաջին էտապը սկսվում է 1941 թ. հոկտեմբերի 2-ից և տևում է մինչև 1941 թ. դեկտեմբերի 5-ը։ Այդ էտապի սկզբում Հիտլերը ձեռնարկեց իր առաջին հարձակումը Մոսկվայի վրա, որը վերջացավ ձախողումով։ Նոյեմբերի 16-ին գերմանացիները Մոսկվայի ճակատում կենտրոնացրին իրենց նոր բերած գլխավոր ուժերը, 51 դիվիզիա, որից 18-ը տանկային և մոտորացված, 33-ը հետևակային։ Նոյեմբերի 6-ին գերմանացիներն սկսեցին իրենց գլխավոր հարձակումը։ Դժվար օրեր էր ապրում մեր Հայրենիքը։ Թշնամին առաջ էր շարժվում։ Մոսկվայի գրավման աղդանշանին էին սպասում Ճապոնիան և Թյուրքիան, որ հարձակվեին մեր երկրի վրա. մասնատեին այն։

Սովետական հրամանատարությունն ստրատեգիական պահեստի ուժեր էր կենտրոնացնում վճռական ճակատում և պատրաստվում էր հակահարձակման։ Սովետական զորքերը նահանջում էին. նրանք նման էին մի հսկա պողպատյա զսպանակի, որը կծկվում ու սեղմվում էր, որ հանկարծ բացվի և ջախջախելով ետ շպրտի իր վրա ճնշող ամեն ինչ։

1941 թ. դեկտեմբերի 6-ին այդ զսպանակը բացվեց։ Սովետական զորքերն անցան հակահարձակման, և սկսվեց գերմանական բանակի ջախջախումը Մոսկվայի առակ։ Դա Մոսկվայի պաշտպանության մեծ ճակատամարտի երկրորդ էտապն էր.

Այժմ համառոտ քննենք, թե այդ մեծ ճակատամարտին ինչով և ինչպես են մասնակցել Հայաստանի զավակները։

2

1941 թ. հոկտեմբերի 19-ին Պաշտպանության Պետական Կոմիտեն որոշում ընդունեց, որով Մոսկվան հայտարարվեց պաշարողական գրության մեջ և կտրուկ միջոցառումներ նշվեցին մայրաքաղաքը պաշտպանելու գերմանական բանակների հարձակումից։ Մոսկվան դարձավ ավելի խիստ, կազմակերպված ռազմաճակատ։ Մոսկվայի մոտերքում որոտում էին հազարավոր թնդանոթներ։ Մոսկվայի երկնքում անընդհատ հնդում էին մոտորները։

Մոսկվան պաշտպանում էին Սովետական բանակները։ Նրանց շարքերում կռվում էին սովետական բոլոր ժողովուրդների զավակները։ Ինչպես բոլոր ճակատներում և ամենուր, այստեղ ևս ռուս մեծ ժողովրդի զավակներն առաջին գծումն էին, նրանք ցույց էին տալիս թշնամուն ատելու, նրա դեմ մարտնչելու, Հայրենիքի համար անձնազոհության դիմելու իսկական օրինակներ։ Նրանք համախմբում էին ուկրաինացի, հայ, վրացի, ուզբեկ, բելոռուս և մյուս ազգերի ռազմիկներին, և նրանց միասնական, անխորտակելի ուժը հակադրում հիտլերյան հորդաներին։

Մոսկվան պաշտպանելու մասին Պետական Պաշտպանության Կոմիտեի որոշումը կայծակի արագությամբ տարածվեց ոչ միայն ճակատում, այլև ամբողջ երկրում, նաև Հայաստանում։ 1941 թ. նոյեմբերի 19-ին և 20-ին Հայաստանի քաղաքներում, գյուղերում և ամենուրեք, որտեղ սովետական մարդիկ էին գտնվում, տեղի ունեցան հայ աշխատավորների միտինգներ, ցույցեր, ժողովներ՝ նվիրված Մոսկվայի պաշտպանությանը։

Ամբողջ հայ ժողովուրդը մի սիրտ ու միտք դարձած, միասնական ու անրաժան կանգնեց Մոսկվայի պաշտպանության կողմը։

Հայաստանի աշխատավորները նամակներով դիմեցին մեծ Ստալինին, որով հայտնում էին իրենց պատրաստակամությունը պաշտպանելու Մոսկվան։ Մոսկվայի պաշտպաններին և քաղաքի աշխատավորներին ուղարկած բազմաթիվ նամակներից մեկում կարդում ենք.

«Մոսկվայի մեր քաջարի եղբայրներ. դուք, որ երկար տարիների ընթացքում կառուցեցիք Կարմիր Մոսկվան, ... այսօր էլ հերոսաբար պաշտպանում էք այն թշնամու հորդաներից։ Ձեր օրինակը ոգևորում է մեզ և մղում դեպի սխրագործություններ... մենք խորապես գիտակցում ենք, որ Մոսկվայի պաշտպանությունը Սովետական Միության բոլոր ժողովուրդների սրբազան պարտքն է»։[1]

Երևանի Կիրովի անվան գործարանի կոլեկտիվն իր նամակում խոստանում էր կրկնապատկել արտադրանքը, ձիրժինցիները խոստանում էին ավելի արագ կատարել բանակի պատվերները, մանածագործները ավելացնում էին հագուստեղենի արտադրությունը Մոսկվայի համար, «Արարատ» տրեստի բանվորները նորանոր ցիստերններով սպիրտ, կոնյակ և օղի էին ուղարկում Մոսկվայի պաշտպաններին։ Հայաստանի կոլխոզնիկները Մոսկվայի պաշտպաններին ուղարկելու համար նվիրում էին լրացուցիչ հազարավոր ցենտներ հացահատիկ, միս և այլ մթերքներ, ուղարկում էին տաք հագուստեղեն, ծանրոցներ և հայրենասիրական բարձր զգացումներով լեցուն նամակներ ու ողջույններ։

Բազմաթիվ հայ բանվորներ, կոլխոզնիկներ, ծառայողներ դիմում էին զինվորական իշխանություններին՝ կամավոր կերպով բանակ գնալու և Մոսկվայի պաշտպանների շարքերը խտացնելու համար։

«Հարազատ Մոսկվայի համար» հոդվածում, 1941 թ. հոկտեմբերի 20-ին մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանը Մոսկվայի ճակատամարտը բնորոշում է որպես «Կյանքի ու մահի գոտեմարտ», որ տեղի է ունենում «երկու հակադիր սկզբունքների, երկու տարամերժ աշխարհների միջև»։ Մոսկվայի տակ տեղի ունեցող ճակատամարտը մղվում էր մեր ժողովրդի ազատության և անկախության համար, մեր Հայրենիքի սքանչելի մայրաքաղաքի համար։ Այդ ճակատամարտի ելքը «վճռողը Կարմիր Բանակի արիությունն է, նրա անձնազոհությունը, նրա աննվաճելի դիմացկունությունը. վճռողը ռուս ժողովրդի և Միության բոլոր ժողովուրդների նվիրվածությունն է, նրանց հանճարը, նրանց զոհաբերությունը... մեզ համար, հայերիս համար նույնչափ սիրելի է, հարազատ Մոսկվան... և մենք ոչինչ չափահ խնայենք Կարմիր Բանակի հաղթանակի համար»։[2]

Մոսկվայի վրա կախված ահեղ սպառնալիքի օրերին ամբողջ հայ ժողովուրդն ավելի կուռ շարքերով էր համախմբվել, ավելի ամուր և անխզելի կապերով էր միացել ռուս մեծ ժողովրդի հետ, Մոսկվայի հետ, Սովետական մեծ հայրենիքի հետ։

---

[1] «Սովետական Հայաստան» 1941 թ., հոկտ. 31։
[2] «Գրական թերթ», 1941 թ. հոկտ. 30։

Հայ ժողովրդի զինվոր զավակներն իրենց այլազգի եղբայրների հետ միասին նետվում էին պատերազմի կրակների մեջ և իրենց արյան ու կյանքի գնով պաշտպանում Մոսկվան։

3

Մոսկվայի հայ պաշտպանները շատ են։ Այս հոդվածում մենք կխոսենք Մոսկվայի պաշտպանության համար մղված մարտերում մասնակցած մի քանի հայերի մասին։

Գերմանական զորքերը հարավից թեանցելով Տուլան, զավթեցին Ելեցը և կատաղությամբ ձգտում էին դեպի Մոսկվա։ Հարավ-արեմտյան ճակատի հրամանատարությունը Կաստորնոյի շրջանում արագությամբ հավաքեց լավ մարզված, զինված, շարժուն զորքերի մի հատուկ խումբ, որը պետք է հակահարված տար հարավից հարձակվող գերմանացիներին։ Այդ շարժուն խմբի հրամանատարության շտաբի պետ նշանակվեց գեներալ-մայոր Ի. Ք. Բաղրամյանը։ 1941 թ. դեկտեմբերի 6-ից Բաղրամյանի գլխավորած զորքերը վճռական հարձակման անցան, կործանիչ հակահարվածներ տվեցին գերմանա-ֆաշիստական զորքերին։ Դեկտեմբերի 9-ին Բաղրամյանի խմբավորման զորքերը ազատագրեցին Ելեց քաղաքը և 400 ուրիշ բնակավայրեր։ Սովետական Ինֆորմբյուրոյի դեկտեմբերի 10-ի հատուկ հաղորդագրությունը Ելեց քաղաքն ազատագրելու և գերմանական բանդաներին այդ շրջանից ետ շպրտելու մասին՝ ծով հրճվանքով լցրեց Սովետական բանակի զինվորների և սովետական բոլոր մարդկանց սրտերը։

Մոսկվան պաշտպանող Հարավ-Արևմտյան ռազմաճակատում հրամանատարական պատասխանատու պոստերում էին գտնվում հայ ժողովրդի ուրիշ նշանավոր զավակներ։ Գեներալ-լեյտենանտ Միքայել Բարսեղովը հանդիսանում էր Հարավ-Արևմտյան ճակատի հրետանու հրամանատարը, իսկ գեներալ Վեքիլովը հանդիսանում էր նրա արժանի տեղակալը։ Բարսեղովը հրետանային գործի իր ամբողջ գիտելիքները, իր մեծ փորձը, որ նա կուտակել էր դեռ սպիտակ ֆինների դեմ մղված կռիվներում, տրամադրում էր Մոսկվան պաշտպանելու։ Բարսեղովի հրետանավորների կործանիչ կրակը բնաջինջ արեց Գուդերիանի բանակները, նրանց հավիտյանս թաղեց ռուսական հողում։ Ահա թե ինչու պատերազմի դժվար օրերին, Մոսկվայի Ա. Մ. Գորկու անվան կուլտուրայի պարկում, «Էրմիտաժ» պարկում, Մետրոյի կայարաններում և ուրիշ շատ հասարակական վայրերում ռուս, ուկրաինացի, բելոռուս և ուրիշ ազգերի նշանավոր գեներալների նկարների շարքում վեհորեն դրված էր հայ ժողովրդի զավակ, Մոսկվայի հերոս պաշտպան Բարսեղովի նկարը։

Հերոսական Տուլան նշանավոր դեր խաղաց Մոսկվայի համար մղված ճակատամարտում։ Տուլայի շրջանում 1941 թ. դեկտեմբերի 3-ին հարձակման համար ելման դիրք ընտրեց գնդապետ Սարգիս Մարտիրոսյանի միավորումը։ Մարտերը մղվում էին Գուդերիանի տանկային զորքերի դեմ։ Մի քանի օր տեող կատաղի մարտերից հետո, Սովետական բանակի ուրիշ զորամասերի հետ միասին, գնդապետ Մարտիրոսյանի զորամասերը ազատագրեցին Տուլան շրջապատումից, իսկ դեկտեմբերի 19-ին ֆաշիստական

զավթիչներից ազատագրեցին Ալեկսին քաղաքը։ Նույն օրը բարձր հրամանատարությունը Մարտիրոսյանին ուղարկել է հետևյալ հեռագիրը.

«Շնորհավորում եմ Ձեզ թշնամու նկատմամբ առաջին խոշոր հաջողության առթիվ և ցանկանում եմ Ձեզ հետագա հաջողություններ հանուն մեր սքանչելի Սոցիալիստական Հայրենիքի»։[1]

Մոսկվայի պաշտպանության պատմության մեջ փառավոր էջեր է գրել հայ ժողովրդի զավակ գեներալ Ստեփան Գինոսյանը։ Մայրաքաղաքի պաշտպանության ծանր օրերին կանչվելով Մոսկվա, Գինոսյանը նոր նշանակում ստացավ։

Մոսկվայից 1941 թ. հոկտեմբերի 3-ին Գինոսյանը գրում է.

«Մոսկվայում կյանքն առաջվա պես եռում է. ամեն ինչ նորմալ է ընթանում, և այլ կերպ էլ լինել չի կարող։ Ամբողջ ժողովուրդը և նրա կարմիր բանակը լիովին համոզված են ոխերիմ թշնամու—ֆաշիզմի դեմ մեր հաղթանակի նկատմամբ»։[2]

Գինոսյանի զորամասերը շատ հերոսական մարտեր մղեցին իրենց հրամանատարի գլխավորությամբ. նրա այդ ազնիվ հավատը լիովին իրականացնելու համար։

Մինչև Մոսկվայի պաշտպանության օրերը գնդապետ Հայկ Մարտիրոսյանը ծառայում էր սովետական հեռավոր-արևելյան սահմանների անդորրությունը և անվտանգությունը պաշտպանող միավորումներից մեկում։ Մոսկվայի համար ստեղծված դժվարին օրերին, 1941 թ. նոյեմբերին Մարտիրոսյանի զորամասերը Սիբիրի վրայով ուղարկվեցին մայրաքաղաքի մատույցները։ Նոյեմբերի 13-ին Մարտիրոսյանը մարտի մեջ մտավ Ստալինոգորսկի շրջանում և ծանր կռիվներ մղեց գերակշիռ ուժեր ունեցող հակառակորդի դեմ։ Ավելի քան քսան օր նրա գեկավարած զինվորները զիշեր ու ցերեկ անընդմեջ կատաղի կռիվներ էին մղում թշնամու դեմ սառնամանիքի և այլ դժվարին պայմաններում։ Մարտիրոսյանը իր սիբիրցի եղբայրներին նետում էր ձեռնամարտի, Ստալինոգորսկ քաղաքի համար, որը մի քանի անգամ ձեռքից ձեռք էր անցնում։ Դեկտեմբերի 6-ից ամբողջ բանակի հետ միասին հարձակման անցավ նաև Մարտիրոսյանը, որի զորամասերը հետապնդում ու ջախջախում էին գերմանական զավթիչներին։ Մոսկվայի պաշտպանության ժամանակ կռվեց Մարտիրոսյանի ռազմական տաղանդը։ Գնդապետ Մարտիրոսյանը ստացավ գեներալի բարձր կոչում։

Մոսկվայի մատույցներում կռվող հայ սպա Ներսես Բալոյանի մասին շատ է գրվել և խոսվել ռուսական մամուլում։ Բալոյանի մասին նույնիսկ առանձին գիրք է տպվել ռազմաճակատի քաղվարչության հրատարակությամբ։ Այստեղ կբերենք գեներալ-մայոր Ա. Լիզյուկովի ընդարձակ հոդվածի հետևյալ կտորը.

«Ես հիշում եմ այսպիսի դեպք. Նարոֆոմինսկի համար մղվող մարտերի ժամանակ մեր զորամասերի վրա հակագրոհի նետվեցին հակառակորդի ավտոմատավորները։ Նրանց երևալն այնքան անսպասելի էր, որ մարտի կենտրոնական հատվածում մեր մի քանի անփորձ

[1] Հայկական ՍՍՌ Գիտ. Ակադ. Հայրենական պատերազմի պատմության կաբինետի արխիվ (Այսուհետև այս արխիվը ցույց կարվի կրճատված, ՀՊԿ Արխիվ), Ֆ.8, գ. 8, թ. 6։

[2] ՀՊԿ Արխիվ, Ֆ. 2, գ. 18։

մարտիկներն սկսեցին նահանջել։ Ինգի հրամանատար, փոխգնդապետ Բալոյանը, որ իր դիտակետից հետևում էր մարտի զարգացմանը, արագորեն գնահատեց իրադրությունը։ Նա հասավ գլխավոր մարտի դաշտը։ Նրան դեմ-հանդիման փախչում էին առանձին մարտիկներ։ Բալոյանը կանգնեցրեց փախչողներին, բարձրացրեց ձեռքը և բարձր բացագանչեց. «Տղաներ, վախեցաք ավտոմատավորներից։ Ով վախենում է, այստեղ, ինձ մոտ։ Նրա աչքերն առկայծում էին վճռականությամբ։ Ճամին ծածանում էր նրա պլաշչը։ Այդ մարդը, որ մենակ կանգնել էր բաց տարածության մեջ ավտոմատավորների կրակի տակ, թվում էր թե դատապարտված է։ Բայց նրա հաստատուն ձայնը և ամուր ձեռքը ռազմիկներին մարտի կանչեցին։ Մի երկու րոպեից հետո նրա շուրջը երևացին մի խումբ մարդիկ։

— Այնքան էլ սարսափելի չէ — կրկնեց Բալոյանը մի քանի անգամ,— այնքան էլ սարսափելի չէ, ահա տեսնում եք։

Երեք-չորս րոպեից հետո մի քանի տասնյակ մարտիկներ Բալոյանի ղեկավարությամբ «ուռա» բացագանչություններով կրոնեցին հակառակորդի վրա։ Այդ ժամանակ կոմիսարը կարգի բերեց ամբողջ տատանված զորամասը և նրան նետեց մարտի։ Առաջադրանքը կատարվեց»։

Մոսկվայի տակ երբ սկսվեց գերմանա-ֆաշիստական զորքերի ջախջախումը, հարձակման անցան նաև փոխգնդապետ Իսահակ Դասպարյանի գլխավորած սիբիրցիները։ Նրանք գրոհում էին Նարոֆոմինսկը, Մալոյարոսլավեցը, Կալուգան և ճակատի մյուս զորքերի հետ միասին ազատագրեցին այդ քաղաքները։ Դասպարյանը հետագայում ստացավ գեներալի կոչում և Մոսկվայի պաշտպանության օրերին ձեռք բերած փառքը բազմապատկեց, հարստացրեց։

Այսպիսով, Սովետական Բանակի մի քանի ինտերնացիոնալ, բազմազգ զորամասեր և մեծավորումներ, որոնք պաշտպանում էին Մոսկվան, կռվում էին հայ գեներալների և ավագ սպաների հրամանատարությամբ։ Այդ հրամանատարական կադրերից շատերը աճել ու կոփվել են հայկական ազգային զորամասերի կազմում և տիրապետելով ստալինյան ռազմական արվեստին, դարձել սովետական զինվորական ստրատեգիայի ու տակտիկայի վարպետներ։

4

Մոսկվայի պաշտպանների մեջ կռվում էին բազմաթիվ հայ շարքային զինվորներ, կրտսեր սպաներ և փոքր ստորաբաժանումների հրամանատարներ ու քաղաշխատողներ։ Հայ ժողովրդի այդ համեստ զավակները կատարելով Հայրենիքի հրամանը, բազմաթիվ սխրագործություններ կատարեցին Մոսկվայի մատույցներում տեղի ունեցած մարտերի մեջ։ Նրանք ոգևորվում էին իրենց ավագ ընկերների և եղբայրների մարտական գործերով և ձգտում պատվով արդարացնել իրենց։

Դրանց թիվը չափազանց մեծ է. մենք կխոսենք միայն մի քանիսի մասին։

Սմոլենսկից դեպի Վյազմա և Մոսկվա տանող ճանապարհներին կռվող մի ստորաբաժանման կոմիսարն էր ընկ. Կարապետ Մուրադխանյանը։ Հնամյա գերակշռող ուժերի ճնշման տակ մեր զորամասերն ակտիվ պաշտ-

1 «Красная звезда», 1 մայիսի 1942 թ., № 102.

պանոդական մարտերով նահանջում էին դեպի Մոսկվա։ 1941 թ. հոկտեմբերի առաջին օրերն էին։ Վյազմայի անկումից հետո Մուրադխանյանի ղեկավարած մարտիկներն իրենց ճանապարհին հանդիպեցին ջրային լայն բնագծի, որն ուներ 50—60 մետր լայնություն։ Թշնամին գավթելով գետի մի ափը, գնդացրային կրակի տակ առավ գետանցը։ Առանց խուճապի մատնվելու, 1941 թ. հոկտեմբերի 10-ին Մուրադխանյանն իր ռազմիկներին կազմակերպեց և սառը ջրի կոնակները հաղթահարելով, լողալով անցավ բնակիծը։ Մյուս ափին Մուրադխանյանը թրջված զինվորներին համախմբեց և դիրքեր մտնելով, համառ դիմադրություն կազմակերպեց։ Մարտերը փոխադրվեցին Մոսկվային ավելի մոտիկ՝ Մոժայսկի մատույցները։ Այստեղ, կատաղի կռվի ժամանակ, Մուրադխանյանը ոտքից վիրավորվեց։ Այդ 1941 թ. հոկտեմբերի 15-ի օրն էր։ Բայց մարտադաշտից քաղաքի հեռանալը կարող էր բացասաբար անդրադառնալ մարտիկների վրա։ Մուրադխանյանը շարունակեց ղեկավարել ստորաբաժանումը ևս 10 օր։ Եվ միայն հոկտեմբերի 25-ին, բժիշկների պնդմամբ, նա ուղարկվեց թիկունք բուժվելու։ Մոսկվայի մատույցները պաշտպանելու ժամանակ հանդես բերած արիության համար Մուրադխանյանը պարգևատրվեց կառավարական բարձր շքանշանով։

Ինչպես հայտնի է, Մոսկվայի պաշտպանության համար մղվող մարտերում պանֆիլովականներն իրենց անձնազոհությամբ և հերոսությամբ դարմանք պատճառեցին ամբողջ աշխարհին։ Պանֆիլովականները հարբստացրին սովետական մարդու հայրենասիրության անմահ տրադիցիաները։ Պանֆիլովի միավորման կազմում մարտնչում էին և շատ հայ ռազմիկներ։ Կհիշենք դրանցից մեկին, ընկեր Նազո Մխիթարյանին։ Նազոն Մոսկվայի տակ, իրամատում կարդաց 28 պանֆիլովցիների կտակը. այդ կտակում ասված է.

«... Մենք մեր կյանքը գրինք Հայրենիքի զոհասեղանին։ Արցունքներ մի թափեք մեր անշունչ մարմինների գրա։ Ատամները սեղմեցեք և եղեք անդրդվելի։ Մենք գիտենք, թե հանուն ինչի ենք մենք գնում դեպի մահ։ Մենք կատարեցինք մեր զինվորական պարտքը։ Մենք փակեցինք թշնամու ճանապարհը. դուրս եկեք մարտի ֆաշիստների դեմ և հիշեցեք՝ հաղթանակ կամ մահ։ Այլ ընտրություն դուք չունեք. ինչպես ե մենք չունենք։ Մենք գոհվեցինք, բայց մենք հաղթեցինք»։

Նոր ատելությունը, վիշտը, ցասումը և վրեժի զգացումը լցրեց Մխիթարյանի սիրտը։ Նա գիրքից-գիրք էր անցնում, բլինդաժից-բլինդաժ, Մոսկվայի պաշտպաններին խրախուսում, ոգևորում։ Պանֆիլովականների դիրքերը մնացին անառիկ. թշնամին այդ բնագծում կանգնեցվեց և այլևս ոչ մի քայլ չկարողացավ առաջ շարժվել դեպի Մոսկվա։ Պանֆիլովական դիվիզիայի քաղբաժինը Նազո Մխիթարյանի մասին գրել է.

«Մայոր Նազո Մխիթարյանը Մոսկվայի ակտիվ պաշտպաններից է, հերոսաբար զոհված 28 պանֆիլովականների զորամասից։ Նա քաջ

1 ՀՊԳԿ Արխիվ, Ն. Մխիթարյանի գործ, թերթ 1—2։

է այնպես, ինչպես և քաջ ու իր մարտիկները։ Նա սրբությամբ է կատարում իր զինվորական պարտքը։[1]

Մոսկվայի հյուսիս-արևմտյան մատույցներում, Ռժևից դեպի արևելք ընկած տարածություններում տանկային հարձակում էին ձեռնարկել ֆաշիստները։ Գնդի հրամանատար Համբարձում Մելիքյանը, իր խաղաղ ու հանգիստ բնավորությամբ, Ռուսս էր անդրդվելի։ Նա վիրավորվել էր, բայց ապաքինվելուց հետո նորից մարտի մեջ էր, նորից իր զինվորների ղեկավար պոստում։ 1941 թ. նոյեմբերի 29-ին Մելիքյանի զորամասի մղած կռիվների շրջանը գերմանացիները նետեցին մի քանի տասնյակ տանկ։

«Սիրելի մարտիկներ և հրամանատարներ.— այս խոսքերով Համբարձումը դիմեց իր ենթականերին. մենք պաշտպանում ենք Մոսկվան. մենք նահանջելու տեղ չունենք։ Ձեր հուժկու կրակով, նռնակներով ետ մղենք գերմանական տանկերը.. հանուն Հայրենիքի, հանուն Ստալինի, ոչնչացնենք թշնամու տանկերը։ Ինձ հետ դեպի մարտ, իմ մարտական ընկերներ»։[2]

1941 թ. դեկտեմբերյան հարձակման օրերին Մելիքյանի զորամասն առաջինների շարքերում էր գրոհում թշնամու վրա և ազատագրում Մոսկվայի մարզի գյուղերն ու քաղաքները։

Գեներալների և սպաների կողքին, Մոսկվայի պաշտպանների շարքում մենք կարող ենք նշել բազմաթիվ շարքայինների և սերժանտների։ Ահա դրանցից մեկը. Հայկ Շաղունցը։ Քսանամյա պատանին 1941 թ. դեկտեմբերի 1-ի և 2-ի ծանր օրերին իր թնդանոթի մոտ դիմավորեց գերմանական գրահավոր հրեշին, ծանր տանկին։ Հարևան թնդանոթները լռեցին։ Շաղունցը և իր նշանառու Ռոմանովը լարեցին իրենց ուժերը։ Նրանք կրակում էին գրահահար արկեր և՛ իրենց և՛ զոհված ընկերների փոխարեն։ Այդ հատվածում 48 ժամ Շաղունցը մենընդմեջ կռիվ էր բռնվում հարձակվող տանկերի դեմ, բայց նրանց ետ էր մղում կամ հրկիզում մահացու արկերի ուղիղ հարվածներով։ Այստեղ հրանոթի հրամանատար, սերժանտ Շաղունցի ընկերներ Գևարովը և Կոնեվը նույնպես մեծ սխրագործություններ կատարեցին։ Հերոսները ոչ մի քայլ չնահանջեցին։ Մարտից հետո Հայկ Շաղունցն ընդունվեց Լենինի-Ստալինի պարտիայի շարքերը։ Շաղունցի կուրծքը զարդարվեց Կարմիր դրոշի շքանշանով։ Այդ բոլորի մասին մեծ հիացմունքով պատմում է ընկեր Ի. Պոպովը։

Մոսկվան պաշտպանելիս իր հատուկ ջոկատով թշնամու լրտեսներին բռնում և անողոք վրեժ էր լուծում Խաչիկ Աբրահամյանը։ Նա համարձակ կերպով, անվախ հարձակվում էր ֆաշիստական ծիվագների վրա, գերիներ էր բռնում։ Խաչիկ Աբրահամյանը, որ եղել էր պարտիզանական ջոկատում և տեսել էր գերմանացիների բարբարոսությունները սովետական մարդկանց նկատմամբ, անհուն ատելությամբ էր լցվել դեպի թշնամին և արդար վրեժի ցասումով էր գործում։

Մոսկվայի համար մղված մարտերում իրենց կատարած սխրագործություններով աչքի ընկան կապիտան Գառնիկ Հակոբյանը, գվարդիայի

[1] ՀԳԳԻ Արխիվ, գործ 356, թ. 14։

[2] ՀԳԳԿ-ի Արխիվ, գ. 333, թերթ 4։

[3] «Комсомол в боях за родину», Москва, 1942 г., стр. 66

կապիտան Արմենակ Բաղդասարյանը, գվարդիայի մայոր Ավետիք Գրիգորյանը և բազմաթիվ ուրիշները։

5

Մոսկվայի պաշտպանության օրերին հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ փոխեցին իրենց պրոֆեսիան և մտան ժողովրդական աշխարհազորի կազմի մեջ. Մոսկվայի պարտիական կազմակերպության ստեղծած կոմունիստական ջոկատները, և կամ կանոնավոր զորամասերը։ Որանց մեջ կարելի էր հանդիպել հայ գիտականի և արվեստագետի, տնտեսագետի և ինժեների, լրագրողի և գյուղատնտեսի։

Գրիշա Բաղրամյանը պատերազմից առաջ սովորում էր Մոսկվայում, ասպիրանտուրայում։ Նա աշխատել էր Սեվանստրոյի Նախագծային բյուրոյում։ Երիտասարդ ինժեները պատրաստվում էր թեկնածուական դիսերտացիա պաշտպանել, երբ թշնամին հարձակվեց Մոսկվայի վրա։ 1941 թ. սեպտեմբերի 6-ին նա թողեց իր գիտական կարիերան և մեկնեց ռազմաճակատ։ Անցնելով մի խումբ սակրավորների գլուխ, նա Մոսկվայի մատույցներում իր բոլոր ընդունակությունները գործի դրեց հակատանկային պաշտպանություն ստեղծելու գերմանական տանկերի ճանապարհը փակելու համար։

Հովհաննես Շահումյանը 1941 թ. գարնանն ավարտեց Մոսկվայի Տիմիրյազևի անվան Գյուղատնտեսական Ակադեմիան և պատրաստվում էր գիտական գործունեության, և ահա վրա հասավ պատերազմը։ Թշնամին շարժվում էր Մոսկվայի վրա։ Շահումյանը դիմում է ռազմական կոմիսարիատին՝ բանակ գնալու համար։ Նրան ուղարկում են ժողովրդական աշխարհազորի ջոկատներից մեկը։ Շահումյանը Տիմիրյազևի ռայոնի 10-րդ աշխարհազորի ջոկատի մեջ մտավ բազմաթիվ ուրիշ գիտական աշխատողների, դասախոսների և ուսանողների հետ միասին։ 1941 թ. սեպտեմբերի վերջերին Շահումյանը մարտի մեջ մտավ Ելնյայի շրջանում, իսկ հետո կատաղի կռիվների մասնակցեց Վոլոկոլամսկի շրջանում, որտեղ էլ նա ծանր վիրավորվեց։ Ապաքինվելուց հետո նա նորից մարտերի մեջ մտավ, այս անգամ Կարմիր Բանակի զորամասերում բազմաթիվ սխրագործություններ կատարեց և արժանացավ Սովետական Միության Հերոսի բարձր կոչման։ Սովետական Միության Հերոս Շահումյանն իր առաջին մարտական մկրտությունն ստացավ Մոսկվան պաշտպանելիս։

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, Ստալինյան մրցանակի լաուրեատ ընկ. Մովսես Գրիգորյանը մտավ աշխարհազորի շարքերը որպես շարքային մարտիկ և զենքը ձեռքին պաշտպանեց Մոսկվան։ Փիլիսոփայական գիտությունների թեկնածու ընկեր Երվանդ Սիմոնյանը նույնպես գնաց աշխարհազորի ջոկատները և, որպես մի վաշտի քաղղեկ, աշխարհազորականներին տանում էր կռվի։ Աշխարհազորական դարձավ դիսերտանտ Սարգիս Հարությունյանը, Երևանի Կիրովյան պարտռայկոմի Նախկին քարտուղարը։ Մարտերում իր հանդես բերած արիության և հմտության համար նա հետագայում բանակի զորամասերում նշանակվեց ղեկավար աշխատանքի, ստացավ գվարդիայի փոխգնդապետի աստիճան։

Մոսկվան պաշտպանելիս հայ ժողովրդի զավակները չէին խնայում

ոչ միայն իրենց ուժերը, եռանդը, արյունը, այլև կյանքը։ Մոսկվայի համար ընկան Հայաստանի զավակներից շատերը։ Նրանց անմահ սխրագործությունները ոգեշնչում են սովետական մարդկանց։ Հպարտության զգացումը համակում է մեզ, երբ թերթում ենք նրանց գործերը, նրանց պայծառ կյանքի գրավոր վկայագրերը։

Ահա Հայկ Մկրտչի Ղազարյանը․ պատերազմի առաջին օրերից նա մեկնեց ճակատ։ Արիաբար կռվելով թշնամու դեմ՝ Ղազարյանը հերոսաբար ընկավ 1942 թ. մարտին։

Մոսկվան պաշտպանելիս զոհվեց գրաքննադատ ընկեր Գրիգոր Կուլօղլյանը, որը թողնելով գիտական աշխատանքը, մանելով աշխարհազորի մեջ, նետվել էր մարտերի բովը և կռվում էր Մոսկվայի համար։

Մոսկվան դարձավ սովետական ժողովրդի հաղթանակի սիմվոլը. Նրա պաշտպանությունը՝ սովետական ժողովուրդների մեծ բարեկամության հոյակապ ցույցը։ Մոսկվայի պաշտպանության պատմական հերոսամարտերում հայ ժողովուրդը ներդրեց իր ավանդը և իր արժանավոր տեղը գրավեց սովետական եղբայրական ժողովուրդների մարտակարգերում։